ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/5.1.1-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման** իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Աութսորս» ՍՊԸ-ի,

- «Էնի Վիշ» ՍՊԸ-ի,
- «Ջասուտա» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման** իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Էնի Վիշ» ՍՊԸ-ի,
- «Ջասուտա» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Էնի Վիշ» ՍՊԸ**-ի ի կողմից ներկայացված հայտում՝

- կցված չէ կանոնադրությունը,
- ներկայացված չէ հստակ և 2.4.1 կետին ամբողջությամբ համապատասխանող ծրագիր,
- ընկերության ղեկավար կազմի և միջոցառման կազմակերպման աշխատանքներում ընդգրկվող անձնակազմի, այդ թվում՝ սույն հրավերի 2.3 կետում նշված մասնագետների ինքնակենսագրականները ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային ստորագրությամբ չեն ներկայացված:

- **«Ջասուտա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

- ներկայացված ծրագիրն ու ֆինանսական նախահաշիվը ամբողջությամբ չեն բավարարում հարվերով ներկայացված պահանջները,
- կցված չէ Հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը Մրցույթին սույն հրավերով նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ,
- ներկայացված գնառաջարկը գերազանցում է հրավերով սահմանված արժեքը,
- կցված չէ ԱԱՀ-ի վերաբերյալ տեղեկանքը:

Մեկի՝

- **«Աութսորս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Հանձնաժողովը առաջարկում է կազմակերպությանը՝

- հանել ֆինանսական նախահաշվի 2.5-.2.7 կետերը՝ հաշվի առնելով, որ դրանք հրավերով չնախատեսված լրացուցիչ իրականացման գործողություններ են, ինչպես նաև նվազեցնել աշխատավարձի համար նախատեսված գումարը: Միաժամանակ, ԱԱՀ արժեքը չներառել ֆինանսական նախահաշվի տողերում, այն նշել առանձին տողով: Նվազեցված և հանված կետերի համար նախատեսված գումարները ուղղել միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ ծառայությունների մատուցմանը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման** իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Էնի Վիշ» ՍՊԸ-ի,
- «Ջասուտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման** իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպությանը՝

- **«Աութսորս» ՍՊԸ-ին՝** հանել ֆինանսական նախահաշվի 2.5-.2.7 կետերը՝ հաշվի առնելով, որ դրանք հրավերով չնախատեսված լրացուցիչ իրականացման գործողություններ են, ինչպես նաև նվազեցնել աշխատավարձի համար նախատեսված գումարը: Միաժամանակ, ԱԱՀ արժեքը չներառել ֆինանսական նախահաշվի տողերում, այն նշել առանձին տողով: Նվազեցված և հանված կետերի համար նախատեսված գումարները ուղղել միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ ծառայությունների մատուցմանը:

3. Հանձնաժողովի առաջարկը ընդունելու և շտկված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում, Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման** իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպությանը՝

- **«Աութսորս» ՍՊԸ-ին՝ հաղթող ճանաչել** և կնքել դրամաշնորհի պայմանագիր:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____